

## ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՐԳԱՍԱԲԵՐ ՈՒՂԻՆ

Լրացավ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ճանաչված գիտնական մանկավարժ ու հասարակական գործիչ Էդիկ Գարեգինի Մինասյանի ծննդյան 50-ամյակը: Նա ծնվել է 1956 թ. ապրիլի 27-ին ՀՀ Թալինի շրջանի Ոսկեթաս գյուղում՝ տոհմիկ և ավանդապահ բազմանդամ ընտանիքում:

Միջնակարգն ավարտելուց հետո Է. Մինասյանը ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ: Նրա գիտահետազոտական աշխատանքի ունակությունները դրսևորվում են դեռ ուսանողական տարիներին: Դրա վկայությունն են հայոց պատմության տարբեր հիմնահարցերին նվիրված ու առաջին կարգի դիպլոմների արժանացած նրա գիտական զեկուցումները և հանրապետական գիտական ընթերցումներում շահած առաջին կարգի մրցանակը:

1979 թ. գերազանցությամբ ավարտելով պատմության ֆակուլտետը՝ նա նույն տարում ընդունվել է համալսարանի հեռակա ասպիրանտուրան: Իր աշխատանքային գործունեությունը նա սկսել է իբրև պատմության ֆակուլտետի դեկանի օգնական, ապա անցել է դասախոսական աշխատանքի համալսարանի պատմության ֆակուլտետում: Է. Մինասյանը 1985 թ. հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ նվիրված ՀԽՍՀ ագրարային հարաբերություններին և սոցիալական զարգացման հիմնախնդիրներին: 1986-1994 թթ. Է. Մինասյանը աշխատում է Երևանի պետական համալսարանի արտասահմանյան քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետում՝ որպես հասարակագիտական առարկաների ամբիոնի վարիչ: Այդ տարիներին նրա նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ արտասահմանյան ուսանողների համար հրատարակվում են պատմություն առարկայի դասավանդման ուսումնական ձեռնարկներ: 1994 թ. Է. Մինասյանը աշխատանքի է անցնում հայոց պատմության ամբիոնում՝ սկզբում դոցենտի, իսկ 2005 թ.՝ պրոֆեսորի պաշտոններով: Նա 1999 թ. առ այսօր Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկանի տեղակալն է:

Է. Մինասյանը համալսարանի տարբեր ֆակուլտետներում դասավանդում է «Հայոց պատմություն» ու «Հայ դիվանագիտության պատմություն» առարկաները, ինչպես նաև «Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն» ու «Հայ քաղաքական կուսակցությունների պատմություն» մասնագիտական դասընթացները: Է. Մինասյանի դասախոսություններին բնորոշ են նյութի մատուցման գիտական բարձր մակարդակը և մատչելիությունը: Հոբելյարը գիտահանրամատչելի թեմաներով հաճախ է հանդես գալիս հանրապետության մամուլում ու հեռուստատեսությամբ, պարբերաբար դասախոսություններ կարդում տարբեր կազմակերպություններում:

Իր դասախոսական գործունեությունը Է. Մինասյանը հաջողությամբ զուգակցում է գիտահետազոտական արդյունավետ աշխատանքի հետ՝ ծանրակշիռ ավանդ ներդնելով հայագիտության մի շարք առանցքային խնդիրների ուսումնասիրության բնագավառում: Դրա վկայությունն են նրա մոտ վեց տասնյակի հասնող ուսումնասիրությունները, այդ թվում՝ երեք մենագրությունները:

Է. Մինասյանը հեղինակել է «Հայոց պատմության հիմնահարցեր» բուհական դասագրքի, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ կողմից հրատարակության պատրաստվող հայոց պատմության քառահատորյակի որոշ բաժիններ: Հայագիտության մեջ զգալի ներդրումն են

նրա՝ հայ դիվանագիտության և Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություններին նվիրված շահեկան աշխատությունները: Է. Մինասյանին իբրև գիտնականի ճանաչում բերեց «Մոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում 1990-2003 թթ.» (Երեվան, 2003) մենագրությունը, որի հիմքում ընկած է նրա 2003 թ. հաջողությամբ պաշտպանած դոկտորական ատենախոսությունը: Դրանում առաջին անգամ փորձ է արվել ընթերցողին ներկայացնել քննվող ժամանակաշրջանի բարդ ու հակասական հիմնահարցերը՝ բացահայտելով հասարակական և տնտեսական ոլորտի ձեռքբերումներն ու թերությունները: Միջազգային հարաբերությունների և պատմության ֆակուլտետների ուսանողության համար լավագույն նվեր էր Է. Մինասյանի և Մ. Մուրադյանի հեղինակած «Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (18-19-րդ դդ.)» (Երևան, 2005) բուհական ուսումնական ձեռնարկը: Այժմ հրատարակության է պատրաստվում նրա «Հայ դիվանագիտության պատմություն» փաստաթղթերի ու նյութերի ժողովածուն:

Է. Մինասյանը հաջողությամբ զբաղվել է նաև Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմության ու նրա միջազգային ճանաչման հիմնահարցերով, որոնց էլ նվիրել է մի շարք հոդվածներ:

Գիտական բարեխղճությամբ ու խոր տեսական ընդհանրացումներով Է. Մինասյանը մի քանի հոդվածներում քննել է նշանավոր հայագետ, հասարակական ու քաղաքական գործիչ Նիկոլ Աղբալյանի պատմագիտական ուսումնասիրությունները և կատարել արդիական նշանակություն ունեցող եզրակացություններ: Է. Մինասյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են եղել նաև Տիգրան Մեծի ռազմադիվանագիտական գործունեության, Արցախյան ազատագրական պայքարի, Հայրենիք-Սփյուռք կապերի, ինչպես նաև Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության բազմաթիվ հարցեր, որոնց էլ նա նվիրել է տասնյակ հոդվածներ:

2002 թ. Է. Մինասյանն ընտրվեց Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս: Նա մի շարք գիտական խորհուրդների անդամ է և գիտական բազմաթիվ զեկուցումներով հանդես է եկել հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովներում: Է. Մինասյանը մեծ ուշադրություն է դարձնում նաև երիտասարդ գիտական և մանկավարժական կադրերի պատրաստմանը, ինչի վկայությունն են նրա ղեկավարությամբ պաշտպանված ու պաշտպանվող թեկնածուական ատենախոսությունները: Նա իր էությամբ բարի է, ընդառաջող, ուսանողների հանդեպ հոգատար է և խրախուսող, որի շնորհիվ ամենուրեք վայելում է գործընկերների և ուսանողության սերն ու հարգանքը:

Իր ուժերի բուռն ծաղկման շրջանում գտնվող հոբելյարին ցանկանանք քաջառողջություն, արևշատություն և գիտական նորանոր հաջողություններ:

ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ Պ. Հ.

Պատմական գիտությունների թեկնածու